Յոյնք՝ և Հայք, սեփհական տեղեաց իւրեանց՝ որպէս յառաջն, նոյնպէս այժմ և առ յապայն տիրեսցեն, և ոչ ոք ըզտեղիս այլոց յափշտակեսցէ և փնտռեսցէ։ Զայն բարձին Հայք՝ ահա հրովարտակն իւրեանց հաստատէ զխնդիրս մեր, և արգելու յափշտակել զտեղիս այլոց. դատ արարէք արդարութեամբ, որով իւրեանց պարտ է հատանել զգլուխս նոցին, զի մուրհակ իւրեանց վկայէ թէ գործք նոցին են անիրաւութեամբ։ Սորչացան Յոյնք զի յայտնեցին զհրովարտակն զայն և կարեւէր խոցեցան սիրտք նոցին իբրեւ 'ի սլաքէ։ Աստանօր յաճախեցին յերկուց կողմանց բանք վիրաւորիչք և կսկծեցուցիչք. Դատաւորք ողոքելով զնոսա ասէին՝ հանդարտեցէք բաւական է, զի իւրաքանչիւր ոք պարտի հնազանդիլ հրամանի իւրոյ հրովարտակին և խաղաղիլ։ Եհարց Բէիզ Էֆէնտին ցՅոյնս եւ ասէ՝ հրովարտակքն Հայոց ճշմարի՞տ են՝ թէ ոչ, Յոյնք ասեն՝ ոչ գիտեմք, կրկնեաց անդրէն՝ ասացէք կամ ճշմարիտ և կամ սուտ։ Յոյնք ասեն՝ եթէ ունին արձանագրութիւն՝ ճըշմարիտ են. վերստին ասէ՝ Բէիզն, եթէ ասէք սուտ լինել հրովարտակացն Հայոց՝ ձերն եւս սուտ, զի դուք եւս յետոյ 'ի թուին 1142 տուեալ էք արձանագրել, զի երկուց ազգաց եւս հին արձանագրութիւնքն ոչ գտան. Նըմին իրի բանադատիք վասն նոցին հրովարտակաց ասել ճշմարիտ, զի և ձերն ճշմարտեսցի. ուրեմն բարւոք խորհեցէք եւ ըստ այնմ տուք պատասխանի՝ փակեցաւ Ատեանն։

Ի նմին աւուր բերին անդ զտումարն Վաղֆի 'ի մըզկիթէն Սէլիմեա, յորում էր իսկ ձեռագիրն և օրինակն Թուղրայի Սէլիմայ առաջնոյ. ընդ որ բաղդատեցին զհրովարտակս Հայոց և Յունաց, առաւել յար և նման գտաւ վերնագիրն և Թուղրայն հրովարտակին Հայոց, քան Յունաց՝ ըստ վկայութեան գիտնականաց Նախարարաց և Բարտուղարաց. յայսմանէ ծագեցաւ լոյս ճշմարտութեան հրովարտակացն Հայոց, զորս Յոյնք սուտ ջանային։

Նիստ Երրորդ, ('ի 14 Ապրիլի)։

Գնացին դարձեալ Հայք եւ Յոյնք ըստ առաջնոյն յԱտեան Դատաւորաց։ Նախ հարցին ցՅոյնս, Հապէշք, Գըղ-